ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Արմենուհի Ծաղիկյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2024 թվականի դեկտեմբերի 2-ից մինչև դեկտեմբերի 13-ը ներառյալ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր խթանել կապիտալի հոսքերի դինամիկայի և տնտեսական աճի, մակրոտնտեսական անկայունության և ճգնաժամի ռիսկի վրա դրանց ազդեցությունների ըմբռնումը: Դասընթացը սկսվում էր վճարային հաշվեկշռի վիճակագրության թարմացումով և կապիտալի հոսքերի և ֆինանսական (կապիտալ) հաշիվների թափանցիկության այլընտրանքային չափորոշիչներով: Դասընթացի երկրորդ մասում ներկայացվել են կապիտալի հոսքերի կապը տնտեսական աճի, մակրոտնտեսական անկայունության և ճգնաժամային ռիսկերի միջև: Դրան հաջորդում էր կապիտալի հոսքերի վերլուծության և կանխատեսման համար վերլուծական մեթոդների և տվյալների աղբյուրների լուսաբանումը: Դասընթացը ավարտվում էր ԱՄՀ-ի ինստիտուցիոնալ տեսակետի քննարկմամբ կապիտալի հոսքերի վերաբերյալ և ինչպես է այն առնչվում մակրոտնտեսական քաղաքականությանը, մակրոտնտեսային միջոցառումներին, կապիտալի հոսքի կառավարման գործիքներին և փոխարժեքի փոխազդեցությանը: Դասընթացը ներառում էր փաստացի ճգնաժամերի դեպքերի ուսումնասիրություն: Դասընթացի ընթացքում մասնակիցներից ակնկալվում էր, որ մասնակիցները ներգրավվեն քննարկումներին և աշխատեն գործնական սեմինարի վարժությունների վրա՝ ամրապնդելով դասախոսության նյութի կիրակությունը:

5. Քննարկված թեմաները՝

- Բացատրվել են կապիտալ հաշվի դինամիկան՝ օգտագործելով x երկրի վճարային հաշվեկշիռը:

• Բացահայտվել են ֆինանսական և տնտեսական ռիսկերը, որոնք ստեղծում է կապիտալի համաշխարհային շուկան ինչպես փոքր, այնպես էլ խոշոր տնտեսություններում:

• Քննարկվել են, թե ինչ մարտահրավերների է բախվում երկիրը՝ փորձելով կայունացնել տնտեսությունը տարբեր պայմաններում, դիտարկելով տնտեսական տարբեր սցենարներ:

• Հստակեցվել են կապիտալի հաշվի ազատականացման և հարակից բարեփոխումների համապատասխան հաջորդականությունները:

• Բացահայտվել են, թե ինչպես քաղաքականության գործողությունները կարող են ազդել կամ կանխել կապիտալի հաշվի ճգնաժամերի առաջացումը:

• Քննարկվել են Մակրոպրուդենցիալ և միկրոպրուդենցիալ քաղաքականությունների տարբերություններն ու կիրառությունները:

• Կապիտալ հոսքերով պայմանավորված մակրոտնտեսական քաղաքականությունը:

• Ֆինանսական ճգնաժամերը և այլն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների գործնական կիրառման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, ուսումնական խմբային խաղեր, պատրաստվել շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասախոսների և մասնակիցների հետ: Միաժամանակ, Ղազախստանի հանրապետության սոցիալ-տնտեսության վիճակի, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների վերաբերյալ իրականացվել է ախտորոշում, բավահայտվել են առկա հիմնախնդիրները և ներկայացվել է շնորհանդես:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

---

17 դեկտեմբերի 2024թ